ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ԲԱԳՈՒ

V

Ցերեկ 5.—Հին պատմաբանները ոչինչ չեն ասում Բագուայ մասին և դորա համար ես թոյլ եմ տալիս ինձ ենթադրելու, որ Բագուն այդ ժամանակ գոյութիւն չունէր[1]) գուցէ հին ժամանակները Բագուայ տեղում գտնուում էր մի որ և է քաղաք. միայն ուրիշ անունով. այդ ենթադրութիւնը միայն այն դէպքում հիմնաւոր է, եթէ ծովի ափը հին ժամանակը նոյնը լինէր, ինչ որ հիմա է։ Որովհետեւ Բագուայ նաւահանգստի ցամաքային յարաբերութեան հեշտութիւնները անշուշտ պէտք է ժողովրդին գրաւէին դէպի այդ կողմերը։ Այդ դէպքում աւելի հաւանականութիւն են ստանում նոցա ենթադրութիւնները, որոնք Բագուն հաշուում են հին *զետարը* կամ *ըարուկը*, մինչեւ անգամ նոյն իսկ Ալբանը[2])։

Յայտնի չէ, թէ մի որ և է բնակչութիւն Բագուում եղել է թէ ոչ՝ Սասանիդների տիրապետութեան ժամանակ. պէտք է ենթադրել որ տեղական օգուտները չէին կարող անարդիւնաւէտ մնալ այն ժամանակ, երբ քաղաքացիական իրաւունքը այդ չափ զարգացել էր Սասանացոց թագաւորութեան ժամանակ, ինչպէս էլ չլինէր, բայց առաջի անտարակուսելի տեղեկութիւնը մենք գտնում ենք արաբացի աշխարհագրերի մօտ։ Մասուդին ասում է Բագուայ և նորա կրակների մասին. միայն մանրամասն չի բացատրում, թէ նորա ժամանակ արդեօք այդ տեղ քաղաք գոյութիւն ունէր թէ ոչ։

Խատախրին նոյնպէս խօսում է միայն Բագուայ նաւթի մասին, բայց Զաքարեայ Ղազվինցին և միւսները արդէն խօսում են Բագու քաղաքի մասին։ Առանձին մանրամասնութեամբ նկարագ-

---

[1])Մովսէս Խորենացւոյ աշխարհագրութեան համաձայն Բագուն յայտնի էր 1500 տարի յառաջ։

[2])Բագուի անունը ինչպէս ասացի, միշտ Բագու է եղել, 1500 տարուանից սկսած, որ Բագուան կամ Բագաւան բառից է առնուած, և նշանակէ Բագնեաց աւան, կրակապաշտութեան տեղ։